ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

27 դեկտեմբերի 2022 թվական

9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 18.10

Հրաչյա Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 6 անդամ՝

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անահիտ Ասատրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է հ.82 մանկապարտեզին, որը բարձրացվել է քաղաքացիների կողմից: Նրանց հետաքրքրում է հետևյալը. քաղաքապետարանը հիմնանորոգել է մանկապարտեզը, սակայն ըստ քաղաքացիների կողմից ուղարկված լուսանկարների՝ այն նորոգվել է մասնակի, այսինքն նորոգվել է միայն մեկ մասնաշենքը: Ուզում եմ իմանալ ինչու՞, կարիքը չկա՞, թե գումարն այդքան է նախատեսված եղել: Նաև կցանկանայի տեղեկանալ Աբելյան փողոցի վերաբերյալ: Այնտեղ մի ժամանակ կատարվեց ասֆալտապատում, հետո քաղաքապետարանի կողմից ասֆալտը քանդվեց, և այն

շարունակում է մնալ որպես կայանատեղի, այն դեպքում, երբ խոստացել էին, որ եզրաքարեր կտեղադրեն և կվերադարձնեն համայնքին:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, կարծում եմ մանկապարտեզի նախագծի հետ կապված խնդիր է եղել, կհանձնարարեմ քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությանը, որպեսզի հարցն ուսումնասիրեն և զեկուցեն, Ձեզ հավելյալ կտեղեկացնենք:

Ինչ վերաբերում է Աբելյան փողոցին, ապա, դրա հետ կապված մենք վարչարարություն ենք իրականացրել: Այս պահի դրությամբ այդտեղ տեղի է ունենում շենքերի շինարարություն, և շինարարական կազմակերպությունը պատասխանատվություն է վերցրել, որպեսզի այդ ամենը վերականգնի: Այնտեղ շինարարական տեխնիկայի պատճառով երթևեկության հետ կապված խնդիր ունենք, միջանկյալ լուծում ենք տվել և թողել, որպեսզի գարնանը կամ ամռանն իրենք ամբողջությամբ վերականգնեն: Դա է պատճառը, որ այդտեղ ասֆալտապատում չի թույլատրվել:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է Տիգրան Մեծի պողոտայի վրա՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքևի հատվածում, տեղադրված կրպակներին, որոնք քաղաքապետարանի կողմից աճուրդային կարգով տրված են վարձակալության, և ըստ պայմանագրի՝ այնտեղ պետք է վաճառվեն միայն հուշանվերներ, և վարձակալը պարտավորվում է բարեկարգել տարածքն ու կատարել գումարային ներդրումներ: Սակայն վարձակալը խախտել է պայմանագրի կետերը և այնտեղ, հուշանվերներից բացի, վաճառվում են նաև այլ իրեր:

Հրաչյա Սարգսյան

-Այո, պարոն Զաքարյան, հարցից լավ տեղյակ եմ: Ժամանակին տեղի է ունեցել մրցույթ, որն ամբողջությամբ նկարահանված է: Մրցույթի մասնակիցները եղել են 5-ը, ինչ որ պահի ավելացել է նոր անհասկանալի տող՝ «այլ ներդրումներ», և մրցույթի հաղթող է ճանաչվել ամենաքիչ ներդրում կատարող մասնակիցը: Այնուհետև կեղծվել է շինթույլտվության ժամկետը, և դիմել են քաղաքապետարան, որպեսզի ավարտական ակտ ստանան: Այս երկու մասով գործն ուղարկվել է համապատասխան մարմիններին և գտնվում է քննության փուլում: Շնորհակալություն:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջինը վերաբերում է քաղաքաշինության ոլորտին: Ինձ դեմել են քաղաքացիներ, որոնք ունեն սեփական տարածք, որն ունի համադրություն հարևանների հողատարածքների հետ, ցանկանում են ուղղումներ կատարել իրենց սեփականության վկայականներում, սակայն Կադաստրի կոմիտեն, շատ ժամանակ, մերժում է քաղաքապետարանից ստացված գրությունները: Եթե

չեմ սխալվում, կա ՀՀ կառավարության որոշում, որ քաղաքապետի գրությունը բավարար է: Դեպքեր կան, որ քաղաքապետարանից վերցրած գրությունները մերժել են, պահանջել են քաղաքապետի որոշում, և ամիսներ շարունակ, նաև տարուց ավել այդ գործերն այդպես էլ մնացել են չավարտված:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, այո գիտենք, որ քարտեզների հետ կապված մենք խնդիր ունենք: Ժամանակին չափագրությունն իրականացվել է այլ սարքավորումների միջոցով, և այժմ նորից չափագրություն են իրականացնում և, երբ համադրում են անում, պարզվում է, որ այլ սեփականատիրոջ գույքի վրա է այդ գույքը համադրվում: Այդ պարագայում կամ դիմողն իր հողից հրաժարվում է, և գույքի տեղը կարգավորվում է, կամ հարևանների հետ համաձայնության են գալիս և համատեղ այդ խնդիրը լուծում են: Եթե կան նման դեպքեր, պարոն Մաչյան, խնդրում եմ ուսումնասիրեք ինչում է խնդիրը և ինձ տեղեկացրեք:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Երկրորդ հարցս հետևյալն է. եթե չեմ սխալվում, նախկին իշխանությունների օրոք Երևան քաղաքում սեփականաշնորհվել է 42 մանկապարտեզ, ինչի արդյունքում այժմ մոտ 12000 երեխա հերթագրված է մանկապարտեզ հաճախելու համար: Բայց քաղաքում, օրինակ՝ Արաբկիր վարչական շրջանում, կան մանկապարտեզներ, որոնք գտնվում են բարձիթողի վիճակում: Արդյոք մենք հնարավորություն չունենք սեփականատերերից ձեռք բերելու (հետ վերցնել) այդ տարածքները՝ որպես համայնքային սեփականություն:

Հրաչյա Սարգսյան

-Այսօրվա մեր հաստատած բյուջեում նման տող չունենք նախատեսված, սակայն ՀՀ վարչապետի կողմից կա հանձնարարական, և այդ հարցով զբաղվում են համապատասխան իրավապահ մարմինները, որպեսզի պարզեն, թե ինչ իրավական հիմքերով են օրինականացվել այդ տարածքները, և դա, կարծում եմ, հետևանք կունենա:

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ինչպես բոլորս գիտենք, ինքնակամ շինությունների հաշվառման համար տրված էր ժամանակ մինչև այս տարվա վերջ, բայց շատ քաղաքացիներ չեն հասցրել հաշվառել, որոշ դեպքեր էլ կան, որ հաշվառման գներն այնքան բարձր են եղել, որ քաղաքացին ֆինանսապես ի վիճակի չի եղել հաշվառելու: Ցանկանում եմ Ձեզ փոխանցել քաղաքացիների մտահոգությունը. արդյոք Դուք կդիմեք ՀՀ կառավարությանը այդ բաց թողնված մասի հետ կապված, որպեսզի կամ արտոնություն սահմանվի, կամ միջնաժամկետ տրամադրվի, կամ մեկ այլ կերպ կարգավորվի: Երևան քաղաքի որոշ հատվածներում էլ՝ Անաստասավանում, 3-րդ գյուղում, 4-րդ գյուղում, Դավթաշենում կան սեփական տներ, որոնց սեփականատերերը մտածում են իրենց տներն

անհատույց սեփականաշնորհելու մասին, սակայն չի բացառվում, որ նրանց այդ արտոնությունը չվերաբերի: Ինչպե՞ս ենք պատրաստվում լուծել այս հարցերը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Հարությունյան, մենք մեր առջև խնդիր չենք դրել, որ քաղաքացին ինչ ուզենա՝ օրինականացնենք: Եթե որոշում ենք կայացրել, որ որոշակի ժամանակահատվածում պետք էր հաշվառել և դիմել, ուրեմն պետք է արվեր: Եթե օրենքում փոփոխություն կատարենք՝ ավելացնենք ևս 2 տարի, ապա, հավատացնում եմ Ձեզ, 2 տարի հետո հայտնվելու ենք նույն իրավիճակում: Կարծում եմ երկար ժամանակ են ունեցել քաղաքացիներն իրենց գույքը հաշվառելու համար, մենք էլ համապատասխան ընթացակարգով դրանք կդիտարկենք: Իմ մոտեցումը դա է:

Հրաչյա Սարգսյան

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է քաղաքապետարանի Բուզանդի 1/3 հասցեում գտնվող մասնաշենքի նկուղային հարկին, որը վարձակալվել է 3 տարով: Քանի որ տարածքը գտնվում էր ոչ բարվոք վիճակում, վարձակալը վերանորոգել է այն և դարձրել ֆիթնես ակումբ: Ըստ վարձակալի՝ 1 տարի անց խնդիր է դրվել բարձրացնելու տարածքի վարձավճարի չափը, չնայած, որ վերջինիս վերանորոգումն ամբողջությամբ արվել է իր միջոցների հաշվին: Քաղաքացու խնդրանքն է, որպեսզի նա շարունակի նույն չափով վճարել մինչև 3 տարին լրանալը, այնուհետև արդեն վճարի վարձավճարի նոր չափով:

Հրաչյա Սարգսյան

-Պարոն Անտոնյան, գոյություն ունի վարձակալության պայմանագիր, որտեղ կետ կա, ըստ որի՝ եթե փոփոխության է ենթարկվում գույքի կադաստրային արժեքը, ապա կարող է լինել գնի վերանայում: Քաղաքապետարանն օգտվել է այդ կետից, այդ պատճառով էլ սահմանել է նոր վարձավճար: Ձեր նշած քաղաքացուն արտոնություն տալու հարցը կարող է որոշել Երևանի ավագանին: Ավելի մանրամասն պարզաբանում կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, խնդրեմ:

Տարոն Մարգարյան

-Իհարկե, ավագանին կարող է նույնիսկ գույքն անհատույց հանձնել քաղաքացուն: Այդպիսի պայմանագրեր վարչությունում շատ կան: Բացառությամբ 1-2 շատ հին կնքված պայմանագրի, բոլոր պայմանագրերում այդ կետը կա, և ես Ձեզ հավաստիացնում եմ, որ բոլոր պայմանագրերով քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից այդ թանկացումներն իրականացվել են:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Անահիտ Ասատրյան, խնդրեմ:

Անահիտ Ասատրյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Համատեղ նամակով Ձեզ էին դիմել քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերում գործող արհմիությունների նախագահները՝ համայնքային ծառայողներին արձակուրդ տրամադրելիս լրացուցիչ աշխատավարձ վճարելու վերաբերյալ հարցը դիտարկելու խնդրանքով: Մենք գիտենք, որ քաղծառայողների համար նման բան նախատեսված է օրենքով: Քանի որ պատասխան դեռ չեն ստացել, կցանկանայի իմանալ Ձեր դիրքորոշումը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, տիկին Ասատրյան, հարցի վերաբերյալ դեռ քննարկում չենք իրականացրել, կքննարկենք, վերջնական որոշում լինելուց հետո անպայման հստակ կպատասխանենք:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է քաղաքի մասնավոր հատվածին՝ սեփական տների բակերի մաքրությանը: 30 տարի է չի մաքրվում, կամ հազվադեպ է մաքրվում՝ բնակիչների ուժերով: Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ:

Հրաչյա Սարգսյան

-Շատ լավ է, որ համայնքի բնակիչները մասնակցում են Երևանի կյանքին, առօրյային: Եթե հիշում եք, մենք ապրիլ ամսին որոշում ընդունեցինք, որ հավաքարարների քանակը դարձնենք 500, այժմ նրանց թիվը 380 է և նրանց միջոցով ենք իրականացնում սանիտարական մաքրումը: Մոտ ժամանակներում, կարծում եմ, հնարավորություն կունենանք հաստիքները համալրելու և սանմաքրման աշխատանքներն ավելի պատշաճ կատարելու:

Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կազմեց՝ Ա.Գևորգյան